ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ·

ԵՐԵՔԵՏ ԷՄՄԵԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

Վ ԵՀափառ Հայրապետի բարի ցանկութեան և կամքի համաձայն՝ այս 1888 թուականից սկսած Արարատ ամսագիրը թէ իւր բովանդակութեան և թէ դիրքի կողմանէ ենթարկուելու է բարեփոխութեան։ Այր Աթոռոյս միաբանութեան հետ հրաւիրուում են աշխատակցելու Արարատին և Հ՚եմարանի ուսուցչական խումբին, ինչպէս և աղգիս մէջ ամենուրեք գտնուող բանասէր, գիտնական և ուսումնական անձինք։

Արարատի խմբագրութիւնը, Նորին Օծութեան հրամանի համեմատ, պարտաւորուում է հրատարակութեան յարմար համարուած յօդուածների իւրաքանչիւր տպագրական թերթի համար վարձատրութիւն վճարել 25—40 ռուբլի, եթէ յօդուածագիրն այդ կրցանկայ։ Յօդուածների ընտրութիւնն և վարձատրութեան քանակութեան որոշումը կպատկանի հանաժողովին, որ հրամանաւ Նորին Օծութեան կազմուի։

Արարատը կհրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագինը տարեկան է և սկսուում է յունուար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ր. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում 5 ր. իսկ Հնդկաստանում և Եգիպտոսում 6 ռուբլի։ Հայաբնակ գաւառներում և քաղաքներում ստորագրուել ցանկացողք թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին։ Հասցէն՝ Эчміадзинъ Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։